Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. հունվարի 29–31–ը Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Վահան Քերոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Արաբական Միացյալ Էմիրություններ՝ ք. Դուբայ, 2022թ. հունվարի 29–31–ը

4. **Հրավիրող կողմը՝**

   «ԷՔՍՊՈ 2020–Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպչական կոմիտե

5. **Գործուղման նպատակը՝**

Համաձայն ՀՀ վարչապետի՝ 2018թ. օգոստոսի 7-ի թիվ 1058-Ա որոշման «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության կազմակերպման աշխատանքների ընդհանուր համակարգման նպատակով գլխավոր հանձնակատար է նշանակվել ՀՀ էկոնոմիկայի նախարարը:

«ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում Հայաստանի ազգային օրվան մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տաղավարի գործունեության համակարգման նպատակով:

Շեյխ Սաիդ Բին Ահմեդ Ալ Մաքթում անձնական գրասենյակի տնօրեն պարոն Հիշամ Ալ Գուրգի հետ հանդիպելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները՝**

Քննարկվել են «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ պատշաճ մասնակությունն ապահովելու նպատակով կազմակերպատեխնիկական բնույթի հարցեր, այդ թվում՝ էմիրաթական կողմի հետ քննարկվել և իմի են բերվել հայկական տաղավարի ձևավորման տարբերակները՝ համապատասխան տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համադրությամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հունվարի 30-ին մասնակցել է «Expo 2020 Dubai» համաշխարհային ցուցահանդեսում Հայաստանի ազգային օրվա պաշտոնական բացման արարողությանը: Միջոցառումը մեկնարկել է ցուցահանդեսի գլխավոր՝ Ալ Վասլ Պլազա կենտրոնական հրապարակում:

Շեյխ Սաիդ Բին Ահմեդ Ալ Մաքթում անձնական գրասենյակի տնօրեն պարոն Հիշամ Ալ Գուրգի հետ հանդիպման ժամանակ քնարկվել են երկու երկրների միջև հետագա համագործակցության, մասնավորապես՝ ներդրումային հնարավորությունները և թվայնացմանն առնչվող թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Վ. Քերոբյանը ս.թ. հունվարի 31-ին Դուբայում գտնվելու ընթացքում հանդիպել է Շեյխ Սաիդ Բին Ահմեդ Ալ Մաքթում անձնական գրասենյակի տնօրեն պարոն Հիշամ Ալ Գուրգի հետ: Հանդիպման ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել երկու երկրների միջև հետագա համագործակցության ամրապնդման և ընդլայնման վերաբերյալ: Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հետագայում ավելի առարկայական քննարկելու անելիքները:

Վահան Քերոբյանը ելույթ է ունեցել Հայաստանի Ազգային օրվա պաշտոնական բացման արարողությանը՝ ներկայացնելով աշխարհում գիտության, մշակույթի և տեխնոլոգիաների զարգացման գործում հայ գիտնականների և նորարարների անգնահատելի ներդրումը՝ ընդգծելով նորարարություններ, որոնք բեկումնային են եղել մարդկության առաջընթացի համար:

Նախարարը ներկայացրել է նաև Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գրավչությունները, տնտեսական հետաքրքրությունները, առանձնացրել հատկապես տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են առավել գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար:

Պաշտոնական բացման արարողության ընթացքում, ինչպես նաև դրանից հետո կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

«Expo 2020 Dubai» համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում Վ. Քերոբյանը այցելել է նաև Ղազախստանի Հանրապետության և Սաուդյան Արաբիայի Թագավորության տաղավարներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Expo 2020 Dubai» ցուցահանդեսում հունվարի 30-ին կայացած Հայաստանի ազգային օրվա շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության հովանու ներքո Հայաստանի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և Աբու Դաբիի առևտրաարդյունաբերական պալատի միջև ստորագրվել է մտադրությունների հուշագիր:

Հայաստանի կողմից փաստաթուղթը ստորագրել է Ներդրումների աջակցման կենտրոնի ներդրումների գծով տնօրեն Արամ Վարդանյանը, իսկ ԱՄԷ կողմից՝ Աբու Դաբիի առևտրաարդյունաբերական պալատի գլխավոր տնօրեն Մուհամմադ ալ-Մուհաիրին: Հուշագրի ստորագրմանը ներկա էր նաև ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝